թիւնը, որ նուիրուած էր տաճկահայերի այժմեան վիճակին, կարող է որոշ չափով մտքերի փոփոխութիւն առաջացնել յօգուտ տաճկահայերի։ Եթէ այսպիսի երեկոյթներ լաճախ տեղի ունենան Եւրոպայի զանազան պետութիւնների կեդրոններում, Եւրոպայի հասարակական կարծիքը անշուշտ ազատ կմնայ հայերի վերաբերմամբ մոլոր և թիւր հայեացքների ճնշումից։

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՕՐՄԱՆԵԱՆԻ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Տեղւոյս լրագիրներին ռուսական հեռագրական գործակալութիւնը հաղորդել էր, որ Կ. Պոլսում, այս յունուարի 6-ին Դուռ Գարուի մայր եկեղեցում սպանութեան փորձ էր կատարուել Ամենապատիւ Պատրիարք սրբ. Օրմանեանի կեանքի դէմ նոյն իսկ ս. պատարագը մատուցանելու միջոցին և թէ պատրիարքը ազատուել է մահից։ Այդ առթիւ մեր Կ. Պոլսի թղթակիցը գրում է մեզ. «Ըստ սովորութեան կը մատուցանէր զս. պատարագ Ամենապատիւ Տ. Մաղաքիա ս. Պատրիարքն։ Դեռ նոր բացուած պատարագի մեծ վարագոյրն, մինչ Նորին Սրբազնութիւնն բուրվառ ի ձեռին հանդիսիւ կիջնէ բեմէն ի Թաբոր շրջիլ ի մէջ ժողովրդեան, և հազիւ երկու կարգ անցած, և ահա բոմբիւն մը կը լսուի ևս. Պատրիարքն կիմանայ իբր թէ մին իւր ուսին ձեռքի հարուած մը տուած ըլլալ կրնակէն, ուստի կը դառնայ ետեւը և կը տեսնէ որ մէկը ատրճանակ ի ձեռին դէպ ի ինքն ուղղած է, և իսկոյն լերկիր խոնարհելով կը մտնէ ալտեղ գտնուած նստարանի ներքև, որ ատեն կորիճ երիտասարդ մի, ոճրագործին ձեռքի ատրճանակը կորզել ուզելով չարաշուք զէնքին բերանէն բռնած կըլլայ, և ոճրագործը տեսնելով որ պիտի չկրնայ ազատել զէնքը, կը պայթեցունէ զայն և կը վիրաւորէ երիտասարդին մատները։ Նոյն ժամուն պատրիարքարանի բարապաններէն մին հասնելով իւր ձեռաց մէջ կառնու ոճրագործին պարանոցը, և ժողովուրդն լուզեալ և գրգռեալ կը լարձակի նորա վերայ, բայց ոստիկանք թող տուէք կաղաղակեն, մեք անորմէ տեղեկութիւն պիտի առնումք, կըսեն և ձեռնակապ կը տանեն ոստիկանութեան նախարարին։

«Իսկ ս. պատրիարքը տակաւին կարծելով թէ վիրաւորեալ չէ, շարունակենք ս. պատարագը կըսէ, բայց քահանայք և ժողովուրդք կաղաչեն որ զգեստներն հանէ և հանգստանալ մի քիչ. և կը հանեն ի պատրիարքարան, ուր տեսնելով, որ կուրծքին աջ կողմը մեծկակ արիւնաթաթաւ նշան կայ, այն ատեն կիմանայ, թէ վիրաւորուած է. և կը մարի և կիլնայ և կը դնեն անկողնոյն մէջ. բարեբախտաբար նոյն պահուն չորս բժիշկք մէկէն կը հասնին, և գործիքով բերանը բանա-

լով փութաջանութիւն կունենան լեղուն դուրս քաշելու։ Այս գործողութեան վերայ ս. Պատրիարքը կսթափի, և բժիշկք վերքը քննելով կը տեսնեն որ Աստուծոյ յատուկ շնորհիւ վերքը միայն այն է՝ որ կապարեայ գնդակը կրնակի կողմերն աջ ուսի միսին մէջէն անցեր, և միւս կողմէն դուրս ելեր է, առանց ոսկորի մը հանդիպելու և առանց երակ մը պայթած լինելու։

«Այս լուրը այն սարսափելի ձիւնին բուքին կը տարածուի մայրաքաղաքի ամեն կողմը և ամէն կողմէ պատրիարքարան կը թափին, վեհ. Սուլթանը անմիջապէս իւր թիկնապահը և բժիշկը կը ղրկէ և իւր ցաւը կը լսնէ 5 օր շարունակ. ամենազգի ժողովուրդ և պատրիարքունք և դեսպանք և վաճառականք դեռ մինչև ցարդ շարունակ այցելութիւն տալով որպիսութիւնը կը հարցունեն։ Աշխարհի ամեն կողմի հայերէն հեռագիրներ կը տեղան։

«Ոճրագործն բնիկ Կարնեցի և այժմ ի Պոլիս վերաբնակեալ Մկրտիչ Խաչիկեանի որդին է 20—21 տարեկան Ցակոբ անունով։»

ԲԵՌԼԻՆԻ ՀԱՅ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Արտասահմանում ապրող հայերն այժմ ամեն միջոց գործ են դնում, որ եւրոպացիք ճիշտ գաղափար կազմեն հայերի մասին և ազատուեն այն նախապաշարուած հայեացքներից, որ տարածուած է վաղուց ի վեր Եւրոպայում։ այսպէս օրինակ Եւրոպացիք կարծում են թէ հայերը բոլորն էլ վաճառականներ են ու հրէաների նման ոչ մի տեղ երկրագործութեամբ չեն պարապում։ Եւրոպացիք մեծ և վաճառաշահ քաղաքներում տեսնելով հայերին և նրանց նիստ ու կացը՝ սխալմամբ ամբողջ հայութեան մասին են գաղափար կազմել և վաշխառու, կեղծաւոր, խորամանկ անպատուաբեր ածականները ամբողջ ազգի վրին փաթաթել, մինչդեռ այդ յատկութիւնները կարելի է վերագրել հայութեան շատ չնչին մասին։

Ահա այսպիսի թիւր կարծիքները փաստօրէն ջրելու նըպատակով՝ Բեռլինում մի քանի հայ և դերմանացի գիտնականների ձեռնարկութեամբ կազմակերպւում է հայկական ցուցահանդէս, որպէսզի հայ մտքի և ձեռքի արտադրութիւններն իւր աչքով իսկ տեսնելով՝ Եւրոպացին համոզուի, որ հայը միմիայն վաճառականութեամբ չէ պարապում, այլ և գիտութիւններով, արուեստներով, արհեստներով, արդիւնաբերութեամբ, երկրագործութեամբ և այլն։ Մէկ խօսքով այդ ցուցահանդիսից պէտք է երևայ հայ ժողովրդի քաղաքակրթութեան աստիճանը։

Ցուցահանդիսի սկզբնական դաղափարը պատկանում է